ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

ՍՈՒՐՄԱԼՈՒՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՀԵՏՈ

1918 թվականին Հայաստանում ծավալված բոլոր կարեւոր իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը դարձավ նաեւ Սուրմալուի գավառը: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ գավառը գտնվում էր թուրքաբնակ տարածքների հարեւանությամբ, ուր բավական ուժեղ էին թուրք-քրդական կազմավորումները: Ավելին, գաղթականների շարունակվող մեծ հոսքը եւ ռուսական հեղափոխությունների հետեւանքով կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը իրենց բացասական ազդեցությունն էին ունենալու ինչպես Արեւմտյան Հայաստանի, այնպես էլ նրա անմիջական հարեւանությամբ գտնվող Սուրմալուի տնտեսական եւ քաղաքական կյանքի վրա: Ուստի պատահական չէր, որ հայաստանյան թերթերից մեկը ստեղծված իրավիճակի մասին պատմող թղթակցության վերնագիր էր ընտրել «Վտանգի առաջ» խորագիրը. «Օրհասական ու ճգնաժամային է մեր կացութիւնը: Պարպուած ու բաց է ամբողջ ռազմաճակատը թուրքերի առաջ: Շատ բան չի կարելի յուսալ արդէն անանդ դարձած ռուս զինուորութենէն. անիկա կորուցած էր կռուելու իր եռանդը երկարատ եւ անգործութեան պատճառով, բայց եւ այնպէս շօշափելի ուժ էր ան թշնամու դէմ: Այսօր այդ ուժն ալ չկայ. վտանգը բացայայտ է»[1]:

Նույն թերթը Սուրմալուի մասին պատմող «Կեանքը Սուրմալուի մէջ» թղթակցության մեջ գրում էր.. «Ռուսական յեղաշրջումից եւ գլխաւորապէս զինադադարից յետոյ, Սուրմալուի մէջ կարգը խանգարուեց եւ պահ մը ժողովուրդն իր բախտին թողնուեցաւ: Միայն յունուարի մէջ հայկական գիւղերի վրայ վեց աւազակային յարձակում տեղի ունեցաւ»[2]: Հարձակումները պատահական չէին. այսպես, թերթի հաղորդման համաձայն «Յունուարի 14-ին Օրգովի քրդերը Համիդ բէկի գլխաւորութեամբ յարձակուել են Ղարաքիլիսայից եկող շարասեան վրայ, սպանել են շարասիւնը հսկող երկու հայ զինուորի եւ թալանել են մեծ քանակութեամբ ալիւր, բրինձ, շաքար եւ գարի, քրդերի ձեռքն են անցել բեռնակիր ուղտերն ու ձիերը: Պաշտօնական քննութեամբ դրամական վնասը գնահատուել է կէս միլիոն ռուբլի... Նոյն օրը Ալի-Դիզակի քրդերը յարձակուել են կառավարական տրանսպորտի վրայ, սպանուել են շարասիւնը հսկող երկու չեչենները. տարել են 200 ֆուրգոն, որոնց մէջ կար մթերք, զէնք եւ 1500-ի հասնող փամփուշտ: Յունուարի 15-ին Էվջիլարի մօտակայ գիւղերի քրդերը յարձակուել են ճամփորդների վրայ»[3]:

Թուրք-քրդական հարձակումներից հատկապես տուժում էին թուրքական եւ քրդական բնակավայրերով շրջապատված հայկական գյուղերը: 1918 թ. առաջին ամիսների իրա-

1 «Աշխատանք», 1918, թ. 69, 13 յունուարի:
2 Անդ, թ. 73, 27 յունուարի:
3 Անդ:

դարձությունների ուսումնասիրությունը հանգեցնում է այն համոզման, որ թուրք-քրդական հարձակումների գլխավոր թիրախ էին ընտրվել հայկական Դաշբուրունն ու Կողբը: Տագնապալի հաղորդագրությունները այդ շրջաններից գալիս էին գրեթե ամեն օր. «Յունուարի 17-ին Դաշբուրունի հինգ հայ գիւղացիներ իրենց գիւղ գնալու ճանապարհին յարձակման են ենթարկւում հարեւան Կարակոյունլուի թուրքերի կողմից. մէկը սպանւում է, չորսը գերւում: Միւս օրը դաշբուրունցիք կերթան Կարակոյունլու եւ գնդակների տարափի տակ հասցնում են սպանել երկու թուրք եւ դուրս բերել իրենց գիւղացիների դիակները եւ գիւղ տեղափոխել»[4]:

Ամենից ծանր հարձակումը Դաշբուրունի վրա կատարվեց 1918թ. փետրվարի 1-ին: Ամբողջ գյուղը ծխի մեջ էր, որը դարձել էր քրդերի ու թուրքերի հարձակման զոհը: Գյուղը կրկին բռնեց գաղթի ճանապարհը. «Երբ հասանք Մարգարա գիւղը,- պատմում էր «Աշխատանք» թերթի թղթակիցը,- մեր առջեւ բացուեց նահանջի սրտաճմլիկ մի տեսարան. ամբողջ Դաշբուրունը գիշերով ձգուել էր դէպի Մարգարա գիւղը, տալով մօտ 300 զոհ՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ: Իսկ դէպքը պատահել էր այսպէս. յունուարի 27-ի երեկոյեան Դաշբուրունի պահակները գիւղի մօտ հանդիպում են 20 զինուած քրդերի: Նրանց հարցաքննութիւնից պարզւում է, որ իբր Կարակոյունլու գիւղը թալանի են գնում: Պահակները չեն հաւատում եւ կռիւ է բորբոքւում նրանց եւ քրդերի միջեւ»[5]:

Սակայն հետագայում միայն պարզուեց, որ այդ ամենը թակարդ է եղել դաշբուրունցիների համար. քրդերը նախօրօք արդէն ծրագրել էին այս ամենը եւ նրանց հասնող օգնութիւնը կազմ պատրաստ գտնուելիս է եղել հէնց Կարակոյունլու գիւղում. «Կարակոյունլուի թուրքերը ահագին բազմութեամբ միանալով չորս կողմից եկած հազարաւոր քրդերի ու թուրքերի, յարձակւում են Դաշբուրունի վրայ: Գիւղացիները դիմադրութիւն են կազմակերպում, սակայն քանի որ կռուող երիտասարդութիւնը բացակայում էր գիւղից, ստիպուած նահանջում են՝ տալով 300 զոհ: Դաշբուրունը կրակի է մատնւում եւ անիսնայ թալանի ենթարկւում»[6]:

«Դաշբուրուն գիւղը աւերուած է, այնտեղից պատգամաւորներ են եկել եւ օգնութիւն են խնդրում,- գրում էր «Զանգ» թերթը,- Կողբ գիւղը պաշարված դրութեան մէջ է: Ճանապարհների բոլոր կամուրջները այրուած են, այրուած է նաեւ Արաքսի Ղարաղալայի կամուրջը: ...Սովն ու սարսափը գիւղացիութեանը յուսահատութեան գիրկն է գցել: Հաղորդակցութիւնը հարեւան գիւղերի հետ կտրուած է: Դրութիւնը կրիտիկական է: Ջինուոր **Սահակ Թորոսեան**»[7]:

Ասել, թե տեղի հայությունը ձեռները ծալած նստած էր եւ ոչինիչ չէր ձեռնարկում՝ ճիշտ չի լինի: «Ոգեւորութիւնը չափազանց բարձր է ժողովրդի մէջ,- գրում էր «Աշխատանք» թերթը: - Շատերը նոյնիսկ ցանկութիւն են յայտնել կամաւոր գրուելու, հակառակ իրենց տարիքի: Մշեցի Մուրատի գլխաւորութեամբ կազմակերպուելիք խմբի զինուորները արդէն հաւաքւում են զօրանոցներում»[8]: Նոյնն էր նաեւ Դաշբուրունին հասնելու պարագայում. «Լուրը

4 Անդ:
5 Անդ, թ. 86, 7 փետրուարի:
6 Անդ:
7 «Զանգ», 1918, թ. 18, 6 մարտի:
8 «Աշխատանք», թ. 75, 30 յունուարի:

Մարգարա հասնելուն պէս,- շարունակում է թերթի թղթակիցը,- Վանի հեծեալ խմբի խմբապետ Մեսրոպը իր զինուորների ու Մարգարայի գիւղացիների հետ հասնում են կռուի վայրը եւ օգնութեան հասնում ողջ մնացած դաշտուրունցիներին: Հաջորդ օրը Կարակոյունլու գիւղը իր պատիժը ստանում է...»[9]:

Սակայն կրկին ստիպված ենք արձանագրելու, որ հայկական կողմի ձեռնարկած այս միջոցառումները կրել են տեղական բնոյթ, ինչը հնարավորություն էր տալիս թուրքերին ու քրդերին վերակազմակերպվելու եւ նոր ուժով հայկական գյուղերի վրա հարձակվելու: Թերթի նույն հաղորդագրության մեջ կարդում ենք. «Իգդիր հասնելուն պէս՝ խուճապ սկսուեց. լուր բերեցին, թէ թուրքերը եւ Օրգովի Համիդ բէկը յարձակուել են Խոշխաբաբ հայկական գիւղի վրայ: Գիւղի երիտասարդութիւնը սկսում է դիմադրել, իսկ ժողովուրդը գաղթում է Իգդիր»[10]:

Թուրք-քրդական հարձակումներից զատ, Կողբը բառի իսկական իմաստով ենթարկվել է պարենային շրջափակման. հացի հայթայթումը գյուղացիների համար դարձել էր առաջնահերթ խնդիր: Հաղորդագրություններն այդ մասին ինքնին բնորոշ են. «Տիրող սարսափների պատճառով,- գրում էր «Զանգ» թերթը,- Կողբը դրսից հաղորդակցուելուց զուրկ է, հաց չի ներմուծուում, գիւղը հոգեվարքային օրեր է ապրում: Սպանութիւններն ու ալան-թալանն էլ միւս կողմից՝ ահի մէջ են պահում գիւղացիներին: ...Թուրքերը Մոլլա-Կամարի հարսանիքաւորների առաջը կտրել են, սպանել փեսացուին եղեւս երկու հոգու, վիրաւորել են ութ հոգու: ... Գիւղում հացի ֆունտը երկու ռուբլով էլ չի ճարւում: Մեռելները անպատան են թաղւում»[11]: Կողբ, 19-ը մարտի. «Հազար ու մի նեղութիւն կրելով, վերջապէս կարողացանք ազատ շունչ քաշել: Մի քանի գիւղեր կրակի տալուց յետոյ բարբարոս թուրքերը իրենց կոտրած համարելով հաշտութիւն են խնդրում: Երկու օր է, ինչ ճանապարհները զինուորների համար կարելի է բացուած համարել: Այսօր Իգդիրից գիւղին պաշտպան եկաւ սահմանապահ գնդի հինգերորդ վաշտը: Վաշտապետը պաշտօնական թղթով յայտնեց տեղի Ազգային խորհրդին, որ Սուրմալուի գաւառը պատերազմական դրութեան մէջ է յայտարարուած...»[12]:

Այս իրադարձությունների հենքի վրա զարմանք է հարուցում թուրքերի՝ այս ամենը թյուրիմացություն համարելու կեցվածքը. «Չորս օր յետոյ,- ասվում է նույն թղթակցության մեջ,- թուրքերը պատուիրակութիւն են ուղարկում գաւառի կոմիսարի մօտ՝ խնդրանքով թոյլ տալու վերադառնալ իրենց տները՝ զէնքը յանձնելու պայմանով: Իսկ կատարուածի համար միայն պատասխանում են, որ **դա արել են Օրգովի թուրքերի սպառնալիքների տակ**»[13]: Թուրքերին իհարկե, հասկանալ կարելի է, նույն կերպ նաեւ տեղի թուրքամետ կոմիսարին: Իսկ դրա կողքին՝ մեր թերթերը կրկին անգամ հաստատում էին, որ «Ճանապարհներն այնքան անապահով են, որ գիւղից-գիւղ անցնելը դարձել է վտանգաւոր եւ գրեթէ անհնարին: Հայերի ու թուրքերի յարաբերութիւնները բաւականին սրուած են...»[14]:

Բնականաբար, այս կռիվների ու ալան-թալանի անմիջական հետեւանքն էր լինում սովի տարածումն ու առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացումը ողջ գավառով

9 Անդ, թ. 86, 7 փետրուարի:
10 Անդ:
11 «Զանգ», 1918, թ. 12, 28 յունուարի:
12 Անդ, թ. 24, 19 մարտի:
13 «Աշխատանք», թ. 86, 7 փետրուարի-Ընդգծումը մերն է -Հ.Հ.:
14 Անդ, թ. 88, 14 մարտի:

մեկ: Կարդում ենք քիչ առաջ բերված թղթակցության շարունակությունը. «Սովը կամաց-կամաց սկսել է իր հունձքը անել. վերջին 10 օրուայ մէջ 12-ի չափ սովամահութեան դէպքեր են պատահել Իգդիր-Մովայի, Հախվեխի, Ալիջանի, Խոշխաբարի եւ նոյնիսկ Իգդիրի մէջ»[15]:

1918 թ. առաջին ամիսներին Սուրմալուում ծավալված իրադարձությունների ուսումնասիրությունը բերում է նաեւ այն համոզման, որ թուրքական հրոսակներին հակահարված տալու գործը կազմակերպական առումով ունեցել է բազում թերություններ: Համենայն դեպս, «Ջանգ» թերթում պատմվող այս դիպվածը, կարծում եմ, հաստատում է ինչպես այս, այնպես էլ քիչ առաջ կատարած մեր եզրակացությունը. «Առաւտեան ժամը 6-ին (1918թ. մարտյան իրադարձությունների մասին է խոսքը՝ Հ.Հ.) սկսուեց կռիւը երեք կողմերից. այն խումբը, որը գնացել էր պահելու քրդերի ճանապարհը ձորի մէջ, շրջապատում է քրդերի կողմից, այնպէս որ՝ կռուելով մի կերպ յետ է գալիս դէպի գիւղի հեռու դիրքերը (Դաշբուրունի մասին է խոսքը՝ Հ.Հ.), տալով հինգ սպանուած, իսկ միւս երկու խմբերը իմանալով, որ քրդերը շուտով կանցնեն իրենց թիկունքը, նոյնպէս յետ են գալիս:

Բայց մի ժամ յետոյ տղերքն ինձ յետ դարձրին գիւղ, որպէսզի Արտաշէսին (Դաշբուրունի պաշտպանական ուժերի հրամանատարն էր՝ Հ.Հ.) յայտնեմ, որ գայ այս կողմը, կարգի բերի անկանոն ձեւով ցրուած դասակը եւ ղեկավարի կռիւը, որովհետեւ աստիճանաբար քրդերի ուժը աւելանում է եւ կրակը սաստկանում:

Վերադարձայ շուտով գիւղամէջ. Արտաշէսին չգտայ. շատ որոնելուց յետոյ նրան գտնում եմ գիւղից երկու վերստ հեռու Իգդիրի ճանապարհի վրայ,-շարունակում է թերթը: - Մի քանի զինուորների հետ վերջինս հանգիստ կանգնած էր. ապշեցի: Յայտնեցի, որ քրդերի ուժերը շատանում են, մերոնք կռում են անկազմակերպ, որ հարկաւոր է քո ներկայութիւնը, որ ղեկավարես կռիւը: Նա սառն անտարբերութեամբ պատասխանեց, թէ դու գնայ, մի կերպ նոր մարդիկ տար, եղածների հետ աշխատէք դիմադրել, մինչեւ Մարգարայից օգնութիւն կհասնի:

Նորից եւ դարձայ գիւղ, սակայն կանանցից բացի գիւղում ոչ-ոքու չգտայ, բոլորը ցրուել էին գիւղի չորս կողմի դիրքերը, բայց առանց ղեկավարների, անկազմակերպ կռում էին առանց իմանալու, թէ ինչ է կատարւում գիւղում կամ իրենց մօտիկ ու հեռու դիրքերում... Երկու կողմերից քրդերն ու թուրքերը կրակն այնպէս ուժեղացրին, որ գնդակները կարկտի պես թափում էին գիւղի փողոցներում ու բակերում: Մի կերպ հասայ Ֆելդշերի մօտ՝ ոտքս կապելու, այնտեղ տեսայ Արտաշէսին եւ ասացի, թէ ինչ եղաւ խոստացուած օգնութիւնը եւ ինչ ես անում դու այստեղ: Նրա փոխարէն պատասխանեց Մեսրոպը, թէ տղաները արդէն կռում են, բայց փամփուշտները վերջանալու վրայ են...

Եւ եթէ չլինէին Մեսրոպի 30 ձիաւորներն ու մարգարացի մի քանի գիւղացիներ, մինչեւ երեկոյ բնակչութեան մեծ մասը գերի կընկնէր եւ կկոտորուէր: Մեծ ու փոքր, կին ու աղջիկ, մի խօսքով, բոլորն իրար գլխով անցած՝ թողեցին գիւղն ու իրենց հայրենի օջախը, փախան դէպի Մարգարա...

Ժամը երկուսին մտանք Մարգարա, որտեղ Արտաշէսին գտայ հեռագրի սենեակում նստած. հանդիմանեցի նրան Գարեգին Վրթանեսեանի եւ Իգդիրի կոմիտէի անդամ Սարգիս Սարգսեանի ներկայութեամբ, թէ ինչպէս անամօթաբար առաջինը փախաւ գիւղից՝

15 Անդ, թ. 75, 30 յունուարի:

թողնելով իր եւ իր հեծեալների ձիերը... Մեր կողմից սպանուածները մոտ 70 հոգի էին, մնացածը անզէն ծերեր էին, կին եւ երեխաներ... Նրանց կողմից կորուստներն աւելի շատ էին:

Անհաւասիկ իսկութիւնը, պարոն զինուորական ղեկավարի փորձառութիւնն ու քաջութիւնը, որին զոհ գնաց Դաշբուրունը, որը դիմադրեց եւ առաջին անգամ գաղթեց, երբ չէր գաղթել նոյնիսկ ռուս-փաճկական պատերազմի ժամանակ, նոյնիսկ 1917թ. քրդերի փասնյակ հարձակումներից յետոյ»[16]:

Ինչպես նկատում ենք, ակնհայտ է մեր զինվորականության մեջ առկա անհամաձայնությունը, ինչը պատերազմական իրավիճակում գրեթե հավասար է ինքնասպանության:

Իսկ թղթակցությանը չհավատալու հարկ չկա, քանի որ այն ստորագրել էր Սուրմալուի կոիվներում եւ հետագայում բազմիցս թրծված կապիտան Խ. Դոլուխանյանը: Սակայն դա չէ կարեւորը. փարիների այս հեռավորությունից մեկ անգամ եւս համոզվում ես, թե որքան էլ մեր զինվորներն ու սպաները իրենց անհատական հատկություններով բազմիցս գերազանցել են փարածաշրջանի առանց բացառության բոլոր ազգերին ու ժողովուրդներին, սակայն միասնականության եւ կազմակերպվածության տեսակետից նույն կերպ էլ զիջել են նրանց: Եւ այս ամենի արդյունքում՝ կրկին գաղթականի ցուպը բռնած ու տնավեր դարձած հայ բնակչություն. «Մարտի 28-ի չորեքշաբթի առաւօտն էր: Օդը մեղմ էր ու պայծառ, արեւը թէեւ տաքացնում էր մեզ, սակայն Արարատի քաղցր զեփիւռը իր շոյանքով կուգար մեր կազդոյրը աւելացնելու»,- գրում է «Զանգ» թերթի թղթակից Հր. Դարինյանը[17]:

Անշուշտ, պատերազմական իրավիճակի համար այս նկարագրությունը հազիվ թե ընթերցողի ինչպես ասում են՝ սրտովը լինի, սակայն կարդանք շարունակությունը... «Խաթունարխից մինչեւ Մարգարա մեզ ընդառաջ էին գալիս Էվջիլարի, Դաշբուրունի եւ Կողբի կողոպտուած գիւղացիները, որոնց վրիժառութեան զգացումը միայն կառաջնորդէր... Կուգային ծերեր, երիտասարդ, աղջիկ, տղայ... բոլորը սայլերով, ձիերով, գրասրներով, աւարառութեան տենչը կփայլէր ամենքի աչքերուն խորքը, որն ինձի կյիշեցնէր 1915 թ. Վանի մայիսեան օրերը...: Այդ գիւղացիները այն դաշբուրունցիներն էին, որոնք ասկէ շաբաթներ առաջ՝ կանոնաւոր տնտեսութիւն ունէին եւ որը սակայն հիմնայատակ աւերուեց թուրքերի կողմից. զարմանալու եւ խղճալու ոչինչ չկար... Մարգարայի մէջ չկրցանք երկար մնալ, եւ ճանապարհս ուղղեցի դէպի Ալիջան գիւղը, քանի որ Դէվեք-Դաղ կոչուած վայրը բաւական երկիւղալի է: Մի քանի օր առաջ նոյն վայրում օթոմոբիլով անցնող Արամն ու Վահան Փափազյանը յարձակման են ենթարկուել քուրդ աւազակների կողմից»[18]:

Ասենք նաեւ, որ Դաշբուրունի անկման մասին ամենատարբեր տեղեկություններ են հաղորդվել կենտրոն, որոնք մեջ եղել են նաեւ միմյանց հակասող լուրեր: Այս տեղեկությունն, օրինակ, որը զետեղված է «Մշակում», չենք կարող պնդել, թե լիովին համապատասխանում է իրողությանը, սակայն որպեսզի ամբողջական լինի Դաշբուրունին հասած աղետը, մեջբերում եմ «դէպքերին ակնատես եւ քաջածանօթ անձնաւորութեան» մեկնաբանությունը, ինչպես ինքը՝ հեղինակն է գրում. «Ուլուխանլուի եւ Ղամարլուի շրջանների մի քանի թուրքական գիւղերի աւերման պատճառով այդ գիւղերի բնակչութեան մեծ մասը անցել էր Դաշբուրու-

16 Անդ:
17 «Զանգ», 1918 ,թ. 33, 14 մայիսի:
18 «Մշակ», 1918, թ. 78, 13 ապրիլի:

նի շրջանի թուրքական գիւղերը, ինչը բաւականին լրջացրեց Դաշբուրունի դրութիւնը: Ուսպի վերահաս վտանգը նախազգալով, գիւղի երկու ընկերների հետ շտապեցինք Երեւան՝ տեղեկացնելու այդ մասին Ազգային խորհրդին եւ սկզբի համար խնդրեցինք երկու գնդացիր, քանի որ թուրքերը վրեժխնդրութեամբ են լցուած մեր նկատմամբ: Մեզ պատասխանեցին, թէ՝ գնացէք եւ հանգիստ եղէք, մեկ-երկու օրից Մարգարա գիւղում զօրամաս է կազմաւորուելու, որը կունենայ հարկաւոր թուով թնդանօթներ եւ գնդացիրներ, որոնք հարկ եղած դէպքում օգնութեան կհասնեն:

Սակայն վերադարձին արդէն տեսանք, թէ ինչպէս թուրքական մի շարք գիւղերի բնակիչներ բնաւեր դարձած հաւաքուել են Մալլաքլու գիւղում, ուր հաւաքուել են նաեւ զաւառի եւ շրջակայ վայրերի թուրք պարագլուխները... Փետրուարի 25-ին Իգդիրից գիւղ եկաւ զինուորական հրամանատար Արտաշէս Պահլաւունին: Նրան տուեցինք Արամի նամակը, որով զգուշացնում էր, թէ Դաշբուրունը իր շրջակայ թուրքերի եւ յատկապէս քրդերի հետ չպէտք է սրի յարաբերութիւնները: Արտաշէսը ինքնաբաւ պատասխանեց՝ ինչ եք մտածում, ես 22 ձիաւորով Մալլաքլուի պէս մեծ գիւղ եմ վախեցրել: Ղարաղոյունն ու Թոխանշալուն ինչ են, որ դիմադրեն»[19]:

Սակայն հենց Արտաշէս Պահլաւունու այս մեծամտութիւնն ու հետագա անզգոյշ քայլերը ավելի սրեցին առանց այն էլ ջափազանց բարդ իրավիճակը: Իսկ տեղացիների անհանգստությունը անտեղի չէր. փետրվարի 26-ի առավոտյան Դաշբուրունի շրջակա թուրքերն ու քրդերը իրենց ոչխարների հոտերի առաջն ընկած, շարժվում են դեպի գյուղացիների եւ գյուղում գտնվող զինվորների բռնած դիրքերը՝ իբր հոտը այդ տեղով անցկացնելու համար: Զինվորներն ու գյուղացիները կամենում են վերջիններիս սպուգել: «Քրդերը աշխատում են խոյս տալ այս սպուգումից, ուսպի մերոնք գէնքի ուժով խլում են նրանցից ոչխարները՝ վիրաւորելով մէկին եւ գերելով նրանցից երկուսին: Արտաշէսի կարգադրութեամբ գերուածներին հօտի հետ միասին բերում են գիւղ: Այս բանը ոչ մէկի դուրը չեկաւ եւ մենք որոշեցինք եր տալ քրդերին հօտը եւ բացատրել, թէ պատահածը թիւրիմացութիւն է: Սակայն միւս օրը կատարւում է հակառակը. Արտաշէսը երեկոյեան ժամը 9-ին հաւաքում է տղաներին եւ տասնապետերին եւ հրամայում է առաւօտեան ժամը 3-ին սկսել Ղարաղոյուն գիւղի վրայ յարձակումը»[20]:

Այս հարձակումն էլ հենց դարձավ լայնածավալ հակահարձակման առիթ, որին ենթարկվեց Դաշբուրունը եւ որի արդյունքում գյուղը կուրստներ կրելուց բացի, ենթարկեց հարկադիր գաղթի: Ահա այսպիսի հետեւանքներ են ունեցել մեր առանձին հրամանատար - գործիչների անհեռատես գործողությունները: «Աշխատանքի» առաջնորդող հոդվածում խմբագիր Բարունակ Կապուտիկյանը գրել է. «Ոչ մէկ արդիւնք ունեցան երկրէն եկած այնքան կորովի եւ այնքան յուժկու կոչերը՝ իրենց օգնելու եւ կամ իրենց թիկունքը գոնէ ապահովելու համար, որպէսզի հարիւր-հազարաւոր ժողովուրդը հարկադրուած չլինէր թողնելու իր ահագին տնտեսութիւնը եւ գալ մեռնելու Արարատեան դաշտի մէջ... եւ ահա այսօր, բախտի ուժգին շառաչով մեր գլխին կգարնէ այն ահաւոր հեռագրաղուրը՝ թէ Վանն ալ բռնեց նահանջին ճամփան... Սարիղամիշի անկումն ու Վանի նահանջը մէկ-մէկ

19 Անդ:
20 Անդ:

սթափեցուցիչ ապտակներ են՝ դրոշմուած իւրաքանչիւր հայի երեսին, որոնց ազդեցութիւնը սակայն, չգիտենք, թէ ինչքան երկարատեւ պիտի ըլլայ»[21]:

Նոյն ճակատագիրը վիճակվեց նաեւ Կողբ գյուղին: Կողբի գաղթը. այսպես է վերնագրված «Զանգ» թերթում այդ մասին պատմող թղթակցությունը. «Զինուորական հրամանով այսօր վերջապէս Կողբն էլ գաղթեց,- ասում է այնտեղ: - Այն գիւղը, որը վեց ամիս շարունակ պաշտպանուելով իրեն շրջապատող թուրքական եւ քրդական գիւղերից եւ միշտ անհողդողդ կերպով դիմաւորել է թշնամուն եւ իր քաջութեան սարսափները տարածել հսկայական թիւ ունեցող թշնամու վրայ: Այսօր, ապրիլի 16-ին գեներալ Սիլիկովը հրամայել է «Զէյթուն» գնդի գնդապետին՝ երեք ժամուայ մէջ գաղթեցնել կողբեցիներին: ...Չնայեած ողբերգական դրութեանը եւ գիւղի միանգամայն աւերակ կացութեանը, կողբեցիք նորից ցանկալի են համարում վերադառնալ գիւղ եւ տիրանալ իրենց ցանքսերին՝ թեկուզ չունենալով անգամ պարսպարուելու համար բնակարան»:[22]

Դրությունը դեռեւս փոքր -ինչ հանգիստ էր Իգդիրում, թեպետ այստեղ էլ մտահոգության առիթ կար. «Ազգաբնակչութեան թիւը Իգդիրում հասնում է 3500-4000-ի: **Տների մեծ մասը դատարկ են**: Կառավարության կողմից խիստ միջոցներ են ձեռք առնուած տները պահպանելու համար: Իգդիրում տիրում է օրինակելի կարգ ու անդորը: Կեանքը բաւականին թանկացել է. ցորենի խալվարը արժէ 350-400 ռ., միսը 1.5 ռուբլի, հալած մաքուր իւղը 5.50 ռ., ձմերուկի կգ. 1 ռ., սեխը 80 կոպեկ, շաքարի ֆունտը 20 ռուբլի»[23]:

Գավառի ընդհանուր վիճակի ծանրացմանը, ինչպես արդեն նշել ենք, նպաստում էր նաեւ գաղթականների շարունակվող հոսքը.«Մեծ բազմութեամբ գաւառ են եկել Ալաշկերտի եւ Խնուսի շրջանների հայ փախստականները: Խնուսի շրջաններից եկածների վիճակը վատ է. հետները ուտելու համարեա թէ ոչինիչ չունեն: Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն կազմակերպել՝ նրանց սովամահութեան եւ հիվանդութիւնների չենթարկելու համար»[24]:

Այս ամենին միանում էր նաեւ թուրքական մոտալուտ արշավանքի վտանգը: Մեր պատմագիտության մեջ Սարդարապատի եւ մայիսյան մյուս հերոսամարտերի պատմության լուսաբանության կողքին բավականին սակավ եւ կցկտուր տեղեկություններ կան Սուրմալուի ռազմաճակատի մասին:

Այն, որ Սուրմալուն ի սկզբանե համարվել է Արեւելյան Հայաստանի դարպասը, դա լավ հասկանում էին նաեւ թուրքերը, ուստի այստեղ էին կենտրոնացրել ռազմական լուրջ ուժեր: Ավելին, 1918թ. փետրվար - մարտ ամիսների դեպքերը հաստատում են, որ այդ ամենը թուրքական կողմի հետեւողական ծրագրի մի մասն էր միայն, որին հետեւելու էր լայնածավալ արշավանքը Արեւելյան Հայաստան: Ուստի, պատահական չէր, որ մարտի կեսերից սկսած, թուրքերն արդեն սկսեցին շոշափել մեր դիրքերի պատրաստվածության աստիճանը: Իհարկե, ներքոբերյալ քաղվածքը փոքր - ինչ փոխում է մեր պատկերացումները մայիսյան հերոսամարտերի նախապատմության մասին:

---

21 «Աշխատանք», 1918, թ. 90, 28 մարտի:
22 «Զանգ», 1918, թ. 36, 24 մայիսի
23 Անդ, թ. 49, 28 օգոստոսի: Ընդգծումը՝ Հ. Հ.:
24 «Աշխատանք», 1918, թ. 90, 28 մարտի:

«Սարիղամիշն ալ ընկաւ,- դառնությամբ գրում էր «Աշխատանքը»,- Թշնամին, որ երէկ Երզնկայէն անդին կգտնուէր, այժմ արդէն եկած, հոքած է մեր սրտին, ռազմաճակատը, որ հարիւրաւոր վերստերով հեռու կգտնուէր մեզնէ, այժմ՝ մեր իսկ կամեցողութեամբ, բերինք եւ մօտեցրեցինք մեր թթին... մենք հնարաւորութիւն ստեղծեցինք, որ իր թեւերը տարածելով բովանդակ քրդական ցեղերը, թուրքաբնակ քաղաքները իրար միանան: Թշնամին ցաքուցրիւ էր, մենք թոյլ տուեցինք որ միանար եւ ուժ կազմէր: Անոր հոգին ընկած էր եւ արիւնը ցամաք, մենք մեր սրարշաւ փախուստով ապացուցեցինք, որ մէկ թնդանօթի ձայնի վրայ Կարինից մինչեւ Սարիղամիշ կրնանք փախչել, Խնուսից՝ Իգդիր ... ճակատը մոտեցավ, քանի մը օր ալ եւ Օրգովի բլուրները կդառնան մեր սահմանագլուխը եւ այն ատեն ներքին օձը, որ դարանակալ կսպասե, ավելի թափ կստանա եւ ավելի ոգի կառնե թիկունքեն: Այո, ուրիշ ճանապարհ չմնաց այլեւս...»[25]:

1918թ. թուրքական արշավանքին առաջիններից մեկը դիմավորեց Սուրմալուն: Շրջապ կարգով տեղի հայերից կազմակերպվեց գումարտակ՝ կապիտան Սոկոլովի եւ Գ.Ռ. Խլղաթյանի գլխավորությամբ: Ջենքի պակասությունն, իհարկե, իրեն զգացնել տալիս էր. սկզբում հնարավոր եղավ ապահովել միայն երկու վաշտ: Գումարտակին հրամայվեց պահել Իգդիրից-Օրգով եւ Չինգիլի-Կարաբուլաղ ընկած սահմանները: «Սկսուել է արշաւանքը Իգդիրի մեր շրջանի դիրքերի վրայ,- հաղորդում էր «Մշակը»: - Դա իրաւունք է տալիս ենթադրելու, որ արդէն կնախապատրաստուի ապագայ թուրքական զինուորական շարժում: Ապրիլի 14-ի երեկոյեան թուրքական հետախոյզները,- շարունակում է թերթը,- միացած հաւիտենական աւազակների հետ, սկսել են մօտենալ մեր դիրքերին եւ փոքր ընդհարումից յետոյ փախել են: Հաջորդ օրը թուրքերը ուժեղացնելով իրենց զինանոցը թնդանօթներով ու գնդացիրներով, միացած տեղական քրդերի եւ թուրքերի մեծ ամբոխի հետ, կսկսեն յարձակումը: Այնտեղ գտնուող մեր ուժերը գնդապետ Չարուխչեանի գլխաւորութեամբ, կարճատեւ դիմադրութիւնից յետոյ նահանջել են՝ տալով բազմաթիւ վիրաւորներ ու սպանուածներ:

Թուրքերն առանց կանգառի շարունակում են իրենց առաջխաղացումը դէպի Օրգով, ուր մեր ուժերը պաշարուած ամեն կողմէն առաջացող թշնամու դէմ կապաղի կռուելուց յետոյ եւ ճեղքելով պաշարման գիծը, դիրքեր են գրաւել Սուլթանաբադի բլուրների մօտ: Թուրքական եւ քրդական ուժերը անընդհատ կառաջանան եւ մօտ ժամը 10-ին հասնում են Իգդիրի դաշտի ճահիճներին՝ յայտնի փայտեա կամուրջի մօտ»[26]: Իգդիրի մատույցների կռիվներում էլ իր մահկանացուն է կնքում Վանի գնդի հրամանատար, գնդապետ Չարուխչեանը, որը մեծ հանդիսաւորութեամբ թաղում է Էջմիածնում:

Օրգովի ուղղությունից բացի, թուրքերը շարժվում են նաեւ Մոսունի գծով՝ Մոսուն-Կուճուղ-Կողբ-Իգդիր ուղղությամբ: Թուրքական զորքերին հաջողվում է հայկական ուժերին քաշել դեպի Կողբի գիծը. թշնամու ավարն է կազմում երկու գնդացիր: Վերադասավորելով ուժերը, հայկական բանակին, որի հիմնական կորիզը կազմում էր Վանի գունդը, հաջողվում է հակահարձակման անցնել եւ ետ բերել ոչ միայն կորցրածը, այլեւ թուրքերին ետ շպրտել Կուճուղ գյուղը: Երկրորդ հարձակման ժամանակ թուրքերն իրենց զինանոցում ունենալով արդեն երկու թնդանոթ, կրկին կարողանում են հայկական ուժերին ստիպել նահանջել

25 Անդ:
26 «Մշակ», 1918, թ. 88, 13 ապրիլի:

Կողը: Հայ զորայինները հրամանատարությունից պահանջում են թնդանոթ ուղարկել. պատասխան է ստացվում, թե Իգդիրից շուտով թնդանոթ կբերեն:

Վանի գնդի Իգդիր տեղափոխվելուց հետո 6-րդ եւ 7-րդ վաշտերը միավորվում են 4-րդ վաշտի հետ: Ապրիլի 11-ին այս վաշտը ուղարկվում է Ճիլլի գյուղը՝ առանց թնդանոթի եւ գնդացրի՝ սահմանը պաշտպանելու: Ապրիլի 14-ին այստեղ կատաղի կռիվ է բորբոքվում թուրքերի եւ 4-րդ վաշտի միջեւ: Հայ զորայինները կռիվներով հասնում են մինչեւ Արհաջ թուրքաբնակ գյուղը, հույս ունենալով, որ այստեղ հայ զինվորներ կգտնեն, սակայն հանդիպում են թուրքական գլխավոր ուժերին: Ապրիլի 15-ի առավոտյան ժամը 7-ից մինչեւ երեկո հայերը կռիվ են տալիս, եւ նրանցից մի քանիսին է միայն հաջողվում հասնել Իգդիր՝ իրենց հետ տանելով նաեւ վիրավոր զինվորներին: Երկու օր հետո միայն Երեւանից հասավ օգնությունը. «Եկարեանը հասաւ Արհաջ՝ սպանուածներին հաւաքելու. բոլորն ալ մերկացած եւ այլանդակուած էին եւ անճանաչելի, բացի Վարդան Պապիկեանից (վերջինս Վանի նշանավոր մտավորականներից էր՝ Ն.Ն.): Ուզեցինք դիակները Երեւան տեղափոխել, բայց արգելեցին եւ անծանօթ մի խորշի մէջ այդպէս էլ ամփոփեցինք»,- հաղորդում էր «Մշակը»[27]:

Հետագայում արդեն, «ռազմաճակատը մօտեցնելու համար» բավականին մեղադրանքներ ներկայացվեցին Վանի երկրորդ գնդին: Առանձին թերթեր նույնիսկ նրանց որպես դավաճան որակեցին: «Աշխատանք» թերթն, իհարկե, այլ կարծիքի էր, եւ այն ճշմարտությունից հեռու չէր. «Այն գունդը, որն իր վրայ կրեց կռի ողջ ծանրութիւնը, ահագին զոհեր տուեց եւ հակահարուածով խլեց Արհաջը, այն գունդը, որը քաղցած, առանց սանիտարներու եւ փոխադրակառքերի, հայհոյանքներու եւ մտրակի տակ անտրտունջ քշուեցաւ հոն՝ ուր որ թելադրեց իր հրամանատարութեան կամքը, այսօր կհամարուի դաւաճան եւ դասալիք՝ Երեւանի մայթերը չափչփողների կամ տաքուկ սենեակները նստող «ազգային գործիչներու» կողմէ»[28]:

Այդուհանդերձ, թուրք-թաթարական եւ նրանց միացած քրդական հրոսակախմբերի հարձակումները գնալով ավելի էին ակտիվանում: Դաշբուրունից ու Կողբից հետո, վերջիններիս հարձակման թիրախ է դառնում գավառական կենտրոն Իգդիրը. «Տաճկական ասկյարները տեղական քուրդ-թաթարական խուժանի հետ միասին,- գրում էր «Զանգը»,- ապրիլի 15-ի գիշերը լոյս կիրակի առաւօտեան դէմ, անսպասելի կերպով յարձակման են անցնում սահմանապահ զօրքերի վրայ: Օգտուելով խաւարից, նրանք այնքան են մօտենում, որ նրանց յաջողւում է շրջապատել Վանի գնդի մի մասին. մերոնք չեն էլ կարծում, թէ եկողները տաճիկներ են, որովհետեւ նրանք իրենց հագուստներով չեն տարբերւում մերոնցից եւ այդպիսով սկսում է կռիւը: Ինչեւէ, մերոնց յաջողւում է պատռել թշնամու շղթան եւ կռուով դուրս գալ թուրքական Արհաջ գիւղը, տալով սակայն բաւականին թով զոհ, որոնց թում եւ գնդապետ Զարուհիշեանը: Շուտով օգնութեան է հասնում պարտիզանական գունդը. Մարտիրոսն իր փոքրաթիւ կռուողներով մինչեւ կէսը թաղուած ճահիճների մէջ, դիմադրում են թշնամուն այնքան, որ Իգդիրից չորս վերստ հեռաւորութեան վրայ ամրանում են եւ վեց թնդանօթներով վերսկսում են կռիւը: Օգնական ուժեր ստա-

27 Անդ:

28 «Աշխատանք», 1918, թ. 98, 19 ապրիլի:

նալով, մերոնք ջարդելով թշնամուն՝ քաշում են մինչև սահմանները: Բռնել են երեք ասկեար գերի...»[29]:

Հեպազայում միայն, երբ մեր հեպախուզությանը հաջողվում է «լեզու» բռնել, պարզվում է հետեյալը. «Մայիսի 2-ին մինչև սահմանը հեպախուզութեան գնացող գեռդակլուեցի Մակարն իր զղաների հետ բռնում է Համիդ անունով մի ասկեարի, որը պատմում է հետեւեալը. մենք թուով 1600 հոգի էինք եւ մտադիր չէինք յարձակուել ձեր վրայ: Բայց Երեւանից եկած դելեգատ Խալիլ-բէկը թուրքերի եւ քրդերի հետ միասին եկան մեր գիւղը եւ յայտնեցին, որ հայերը Երեւանի բոլոր թուրքական գիւղերը թալանել են եւ կոտորել մարդկանց: Ողջ մնացածները բարձրացել են լեռները, որտեղ կոտորւում են սովից ու հիւանդութիւններից, մի բան արէք՝ մենք էլ ձեր հետ գնանք յարձակուենք Իգդիրի վրայ, այդպիսով թէ մեր վրէժը լուծած կլինենք եւ թէ մեծ քանակութեամբ մթերքներ ձեռք կբերենք: Գերու ճիշտ նկարագրութիւնից պարզւում է, որ Խալիլ-բէկը Երեւանի յայտնի բէկերից է, որը մի քանի ամիս առաջ իր հրեշային ծրագրերով ու պրոպագանդայով պղտորեց խաղաղ հայ եւ թուրք ռամիկ բնակչութեանը...

Հիմա դրութիւնը խաղաղ է: Իգդիրի ճանապարհները անվտանգ են, չնայեած առաջ նոյնիսկ զինուած ուժերին չէին վստահեցնում այդ տեղերով անցնելու: Իգդիրի, Ալի-Ղամարի եւ միւս հայ գիւղերի բնակչութեան գաղթը շարունակւում է դէպի Էջմիածին եւ Երեւան »[30]:

Ինչ խոսք, ռազմաճակատի մոտենալը հոգեբանական տեսակետից բացասական ազդեցություն էր ունենում Սուրմալուի հայ բնակչության վրա. «Կեանքը սկսել է տակաւին անշարժանալ,- գրում էր «Աշխատանք»:- Մխիթարական քիչ բան կայ. վերջերս սահմանագլխին մեր կրած անհաջողութիւնն ու կորուստները եւ սրանց միացած Էրզրումի, Սարիղամիշի անկումն ու Կարսի յանձնումը նշանակալի չափով խորը ազդեցութիւն են թողել ընդհանուր տրմադրության վրայ: Նկատելի է յուսալքումը եւ թուլութեան նշանները»[31]:

Ինչեւէ, Ալեքսանդրապոլի անկումից յետոյ հերթը հասաւ Իգդիրին.«Մայիսի 20-ին գնդապետ Փիրումեանը Իգդիրից հեռագրում է.«Թուրքական կանոնաւոր զօրամասերը միացած քրդերի եւ տեղացի թուրքերի հետ, անցնելով լեռնանցքը, շարժում են Իգդիրի վրայ: Խնդրում եմ շուտափոյթ կարգադրութիւն անել. այս էլ երկրորդ անգամն է, որ թուրքերը խախտելով զինադադարի պայմանները, փորձում են անցնել մեր շրջանը: Ճակատի մեծ տարածութեան պատճառով կարգադրեցի, որ զօրքերը կանոնաւոր կերպով քաշուեն դէպի Մարգարա գիւղը»[32]: Այլ խոսքով, Սարդարապատի ճակատամարտի նախօրյակին ողջ Սուրմալուի գավառի հայությունը գաղթի ենթարկվեց: Նրանց մեջ հատկապես Կողբը, Դաշբուրունը, Աբաս-Գյոլը, Գյուլլուջան եւ Մոլլա-Կամարը՝ շուրջ 15-16 հազ. ազգաբնակչություն, տեղավորվում են շրջակա Ղուրդուղուլիի եւ Սարդարապատի շրջանի գյուղերում: Հատկանշական է, որ տարիներով փախստականներին ապաստանած սուրմալեցիները այժմ արդեն իրենք են դառնում փախստական եւ տեղավորվում են ալաշկերտցիների, մանազկերտցիների եւ խնուսցիների կողքին: Գաղթած սուրմալեցիների մի մասն էլ տեղավորվում է Էջմիածնի եւ Երեւանին շրջակա գյուղերում, Փարաքարում եւ Ջաֆարաբադում (ներկա-

29 «Զանգ»,1918, թ. 35, 21 մայիսի:
30 Անդ:
31 «Աշխատանք», թ. 98, 14 ապրիլի:
32 Անդ, թ. 110, 24 մայիսի:

յիս Մասիսի շրջանի Արգավանդ գյուղն է՝ Հ.Հ.): Կողբից գաղթածները տեղավորվել էին Սարդարապատում՝ թվով 280 ընտանիք, Ջաֆարաբադում՝ 93, Դաշբուրունից գաղթածները Ղուրդուղուլիում՝ 231 ընտանիք: Մոլլա-Կամարից գաղթել էր՝ 57 ընտանիք, Աբաս-Գյոլից՝ 43 եւ Գյոլլուջայից՝ 78 ընտանիք:

Սակայն եթե Սուրմալուի հայկական գյուղերի մի մասը գաղթում էր կահկարասիով ու անասուններով, ապա բոլորովին այլ էր կողբեցիների վիճակը.«Ամենէն օժանդակութեան կարօտ են Կողբի գաղթականները: Նրանց նահանջը տեղի ունեցաւ շատ անսպասելի պայմաններում: Երկու ժամուայ ընթացքում նոյնիսկ հնարաւորություն չունեցաւ ուտելու պաշար վերցնել, իրենց ունեցած-չունեցածը թողեցին այնտեղ, ինչն էլ անմիջապէս թալանի ենթարկուեց հարեւան թուրքական գիւղերի կողմից: Կողբեցիները ըստ շէների սպացել են կերակուր, մթերք, շաքար»[33]:

Եւ այդուհանդերձ, 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակաընթացքում թուրքերը հասցրեցին թալանի ենթարկել գավառը. «Թուրքական զօրքերի հեռանալուց յետոյ մի սոսկալի աւերում է տիրում Սուրմալուի գաւառում՝ Իգդիրից մինչեւ վերջին գիւղը, - գրում էր «Զանգ» թերթը: - Առաջին գիւղը, որը համարեա թէ կպած է Իգդիրին, Իգդիր-Մովան է: Գիւղացիներից շատերը քոչել են աւելի ուժեղ գիւղեր: Այստեղ կարելի է տեսնել մի սոսկալի պատկեր՝ հայերի բոլոր գոյքը, կահկարասիները, երկրագործական գործիքները առանց բացառութեան տարուել են թուրքական գիւղեր: Այսպէս, օրինակ, Մալլաքլու գիւղում, որը Իգդիրից վեց վերստ հեռաւորության վրայ է, գիւղացիներից մէկի բակում գտնուել էր մի մեծ դարպաս, որը բերուած էր Բլուրից եւ նրա պատկանելությունը յայտնի է, վեց հատ դռներ իրենց շրջանակով, 80 հատ հիանալի գերաններ, 50 հատ արքունական բրուսոկներ, 15 պատուհան, 2 կոմոդ, 2 բուֆետ, 3 սեղան, երկաթեայ մահճակալներ, 6 ջառջառ, կշեռքներ, բալկոնի փայտեր, գերանդիներ, կացիններ, բահեր, մարկոսներ, եղաններ, մեծ քանակությամբ շորեղէն ու պղնձեղէն: Նոյն գիւղում մեր իջեւանած տան բակում մենք տեսանք 3 հատ արքունական նոր ֆուրգոններ»,- գրում էր «Զանգի» թղթակից Ռուբեն Դրամփեանը[34]:

Այսպիսին էր իրավիճակը Սուրմալուում 1918թ. մայիսյան հերոսամարտերին հաջորդած ամիսներին, երբ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը թվում էր, թե գլխավոր ճակատամարտը եւ հետում էր, մինչդեռ արդեն հստակորեն ուրվագծվում էր նոր ռազմաճակատ բացելու թուրք- քրդական նկրտումները:

33 Անդ, 1918, թ. 13 4, 19 հուլիսի:
34 «Զանգ», 1919 թ., թ. 19: